

րը կը յանձնէ Կարնոյ առաջնորդին, իսկ այս մասնատուփը կը կը պահէ իր մօտը: Յետոյ Սողոմոն Երուսաղէմ կ'երթայ եղբօրը ժառանգութեան տիրանալու: (Ազգր. հաւն. ժա. գիրք. էջ 153—54):

Հէթում Բ. ունի իր սեպհական ընտիր Աստուածաշունչին վերջը ինքնաձեռագիր ոտանաւոր յիշատակարան մը. նոյն Աստուածաշունչը կը գտնուի Էջմիածնի մատենադարանը ՁԽԴ (= 1295) թուականով և գրչութեամբ Ստեփանոս գրչին: Այս ոտանաւոր յիշատակարանին վերջը կը գտնուէր քառանկիւնաձեւ թագաւորական կնիքը զոր օտար ձեռքեր կտրած հանած են: (Արարս. 1869, էջ 41—42):

ՀՄԱՅՆԱԿ ԵՊՍ. ԴԻՄԱԲՍԵԱՆԵՆ կաւ ԱՅԱԶՄԱԼԸՆԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Մը. Ծ. 1839 ին. աւագանի անունը Բարսեղ. աշկ. ժառ. վարժ.ի (1863—65). զեռ սարկաւագ՝ հրաժարելով Պոլիս կը մեկնի: Ձռ. 1869 ին, Եէնիգափուի մէջ Յարութիւն եպս. վեհապետեանէն. վարած է քարոզչական, ժողովական և առաջնորդական պաշտօններ. 1880 ին եպս. կը ձեռնադրուի. Պատրիարքական Տեղապահ Կ. Պոլսի 1894ին. կը վախճանի 1919ին:

Հրատարակած է հետեւեալները, նոր սարի եւ մտաորակաւ սևուկոյ սղայոց (տպ. Պոլիս, 1867?). Ասոյիկ Հայրենեաց կամ Աղբերակունք յառաջիկանքեան (տպ. Պոլիս, 1869). Շիրք մանունի ի Միջերկրականե (տպ. Պոլիս, 1878). 1875 ին հիմնադիր Հայաստանեաց սպարակի եւ Լոյս կրօնական հանդիսին: 1876 ին Ներսէս պատրիարքի հրամանով այցելած է քանի մը քաղաքներ եւ մասնաւորապէս Ս. Յակոբի վանքը եւ պատրաստած է օրուան միաբանութեան ցուցակը եւ այցելած տեղերու նկարագրութիւնը (Շիրք, էջ 221-270):

ՀՄԱՅՆԱԿ ՎՐԴ. ԵՐԷՅԵԱՆ, ՍԱՍՈՒՆՅԻ.—Մը. Ծ. 1862ին, աշկ. ժառ. վարժ.ի. Ձռ. 1889 ին. մասակարար (1894-1901). ՏՓ. (1902-4). ՏԲ. (1906-7). ՏԴ. (1909-910). կը վախճանի 1921 ին:

ՀՈՒՓՍԻՄԷ ԿՈՅՍ ԹԱՀԻՐԵԱՆՅ, ՏՓԽԻՍԵՑԻ.— Ծ. 1847ին. 1874ին սարկաւագուհի կը ձեռնադրուի Տփլիսի Ս. Ստեփանոս Անապատին մէջ: Յարութիւն պտրք.ի Օրհնութեան գրովը ի նըպաստ Ս. Յակոբի վանքին պարտուց վճարման հանգանակու-